ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ-15/11-16-05-83-16

ք. Երևան <<18>> << 08 >> 2016 թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա.Շահնազարյանի**, որը գործում է է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<**Մակրո Ֆուդ**>> **ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ա.Հանեշյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում՝ Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Ջնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **395135** (**երեք հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր երեսունհինգ**) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12. 2016 թ.**:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման

արձանագրության 2 /երկու/ օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա:

Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	**«Մակրո Ֆուդ» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	Հասցե ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02505983	Հ/Հ 1930053040790100
	ՀՎՀՀ 00886056
Ա.Շահնազարյան	**Ա.Հանեշյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
<<18>> <<08>> 2016 թ. կնքված
N ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ-15/11-16-05 - 83 - 16 ծածկագրով գնման պայմանագրի

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Ա չափ.	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	տնտեսող լամպեր	<<Reluchi>> Տնտեսող լամպ՝ օղակաձև, լամպակոթով, 20Վտ անվանական հզորությամբ, 50Հց հաճախականության, E27, երկարությունը՝ 10.5սմ, դեղին և սպիտակ լուսավորությամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի
2	ցերեկային լամպ 120սմ	<<LISMA>> Խողովակաձև լյումինեսցենտային լամպ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 40 Վտ անվանական հզորությամբ, 50Հց հաճախականության, 120 սմ՝ ըստ ԳՕՍ 6825-91: Անվտանգությունը՝ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի
3	էլեկտրական լամպեր	<<Ecolight>>Էլեկտրական լամպ (220-230) Վ լարման, 50 Հց հաճախականության, 60 Վտ հզորությամբ, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 14 տիպի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված: «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի
7	էլեկտրական ապահովիչ, միաֆազ 40Ա	Լեգրան տեսակի հալուն ապահովիչ՝ 100Ա անվանական հոսանքով, լարումը՝ 380 Վ, ըստ ԳՕՍ 17242-86 (ՊՆ-2), նախատեսված է գերբեռնման և կարճ միացումների ժամանակ ուժային գծերի պաշտպանության համար: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի:
9	առաստաղի լուսավորման սարքեր	Լույս կախովի առաստաղի համար սպիտակ գույնի R100, կոթառը՝ E27/27:
11	վարդակ երկբևեռանի	Վարդակ պլաստմասե UL-94V, 1 port RJ11 բնիկով, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ կաթնագույն, «Մակել» օրիգինալ, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի:

12	էլեկտրական երկարացման լար	Չափսը՝ 5տ, 5մ, 16Ա, 250Վ, միացման մանրակներով, ընդհանուր անջատման հնարավորությամբ, ամուր լարով, «Մակել»: Անվտանգությունն՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի:
14	խրոց սովորական	Խրոց սովորական, էլեկտրական խրոց 6,3/10Ա, 250 Վ, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի:
15	տվիչներ	Շարժական տվիչ 3600C, 50Հ, տրամագիծը 100մմ, ազդեցությունը 8մ հեռավորության վրա, բարձր որակի:
19	կողպեքների մասեր	Դռան կախովի կողպեք, նիկելապատ, երեք բանալիով, բարձր որակի:
20	կողպեքների մասեր	Եվրոդռների ներդրովի փականի միջուկ բանալիներով, երկարությունը՝ 9սմ <<Dak>>
28	գորգեր	Ռետինե գորգ նախատեսված մուտքերի դռների դիմաց տեղադրելու համար, ռետինե հիմքով /հաստությունը ոչ պակաս 0.5սմ/ և կոկոսային ծածկույթով /հաստությունը ոչ պակաս 1.0 սմ/ չափերը 90x45սմ:
29	ախտահանիչ նյութեր	Սպիտակեցնող և ախտահանիչ հատկություններով հեղուկ /ժավել/, ակտիվ քլորի պարունակությունը 120 կգ/մ^3:
30	օճառ, ձեռքի	Ձեռքի օճառ «Rubis», չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Ձեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Ձեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Մանկական» տեսակի համար՝ 0,15 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4%-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը:
32	օճառ, տնտեսական	Որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար)՝ ոչ պակաս 78 գ, սոդայանյութերի զանգվածային մասը (վերահաշվարկված ըստ Na2O)՝ 0,2-ից ոչ ավելի, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ 36-41 0C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, փրփուրի նախնական ծավալը՝ 350 սմ3-ից ոչ պակաս:
33	զուգարանի խոզանակներ	Զուգարանի խոզանակ նիկելապատ, երկար բռնակով, կոշտ մազիկներով, Kadaure
34	կահույքի փայլեցման միջոց	Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար աերոզոլային փաթեթվածքով, հեղուկի տարաներով, «Polo»:

38	ավելներ, խոզանակներ, և այլ կենցաղային մաքրող պարագաներ	Հատակ լվանալու կոմպլեկտ քամելու հարմարանքով, «Zambak»
39	ավելներ, խոզանակներ, և այլ կենցաղային մաքրող պարագաներ	Հակատակի մաքրման փայտ գլխիկով, «Zambak»
40	հատակի լվացման լաթ	Հատակի մաքրման շվաբրի գլխիկ թելերով, Չինական արտադրության:
41	հատակի լվացման լաթ	Հատակի մաքրման շոր, չափը՝ 45x15սմ, նախատեսված հատակը մաքրման փայտի համար, Սիրիական արտադրության:
42	հատակի լվացման լաթ	Հատակի մաքրման շոր, բամբակյա գործվածքից Սիրիական արտադրության , չափը՝ 80x100 սմ:
43	ապակի մաքրման լաթ	Լաթեր տրիկոտաժային,հյուսվածքային բամբակյա հումքից, չափը՝ 60x40սմ:
Մատակարարման վայրը՝ ք. Երևան, Միեր Մկրտչյան 5:		

ԳՆՈՐԴ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505983

Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ
Հասցե ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Ա.Հանեշյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
<< 18 >> << 08 >> 2016 թ. կնքված
N ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ-15/11-16-05 ծածկագրով գնման պայմանագրի
8316

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ՀՀ չափ.	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2016թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	տնտեսող լամպեր	հատ	604	-	-	-	-	-	-	**200**	120800	**200**	120800
2	ցերեկային լամպ 120սմ	հատ	259	-	-	-	-	-	-	**15**	3885	**15**	3885
3	էլեկտրական լամպեր	հատ	83	-	-	-	-	-	-	**200**	16600	**200**	16600
7	էլեկտրական ապահովիչ, միաֆազ 40Ա	հատ	1545	-	-	-	-	-	-	**6**	9270	**6**	9270
9	առաստաղի լուսավորման սարքեր	հատ	410	-	-	-	-	-	-	**15**	6150	**15**	6150
11	վարդակ երկբևեռանի	հատ	475	-	-	-	-	**20**	9500	-	-	**20**	9500
12	էլեկտրական երկարացման լար	հատ	2615	-	-	-	-	**20**	52300	-	-	**20**	52300
14	խրոց սովորական	հատ	104	-	-	-	-	-	-	**20**	2080	**20**	2080
15	տվիչներ	հատ	3815	-	-	-	-	-	-	**15**	57225	**15**	57225

19	կողպեքների մասեր	հատ	1325	-	-	-	-	-	-	**10**	13250	**10**	13250
20	կողպեքների մասեր	հատ	1715	-	-	-	-	-	-	**10**	17150	**10**	17150
28	գորգեր	հատ	4400	-	-	-	-	-	-	**3**	13200	**3**	13200
29	ախտահանիչ նյութեր	լիտր	100	-	-	-	-	-	-	**20**	2000	**20**	2000
30	օճառ, ձեռքի	հատ	177	-	-	-	-	-	-	**50**	8850	**50**	8850
32	օճառ, տնտեսական	հատ	70	-	-	-	-	-	-	**30**	2100	**30**	2100
33	զուգարանի խոզանակներ	հատ	610	-	-	-	-	-	-	**5**	3050	**5**	3050
34	կահույքի փայլեցման միջոց	հատ	435	-	-	-	-	-	-	**15**	6525	**15**	6525
38	ավելներ, խոզանակներ, և այլ կենցաղային մաքրող պարագաներ	հատ	2790	-	-	-	-	-	-	**5**	13950	**5**	13950
39	ավելներ, խոզանակներ, և այլ կենցաղային մաքրող պարագաներ	հատ	2350	-	-	-	-	-	-	**5**	11750	**5**	11750
40	հատակի լվացման լաթ	հատ	515	-	-	-	-	-	-	**5**	2575	**5**	2575
41	հատակի լվացման լաթ	հատ	385	-	-	-	-	-	-	**5**	1925	**5**	1925
42	հատակի լվացման լաթ	հատ	700	-	-	-	-	-	-	**20**	14000	**20**	14000

43	ապակի մաքրման լաթ	հատ	350	-	-	-	-	-	-	**20**	7000	**20**	7000
Ընդամենը				X	-	X	-	X	**61800**	X	**333335**	X	**395135**

ԳՆՈՐԴ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝900013010013, ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ
Հասցե ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՎՀՀ 00886056

Ա.Հանեշյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
<< 18>> << 08>> 2016թ. կնքված
N ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ-15/11-16-05-83-16 ծածկագրով գնման պայմանագրի

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ և ԼՎԱՑՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ չափ.	Ապրանքի անվանումը	Տնտեսագիտ. դասակարգում	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	տնտեսող լամպեր	4267	-	-	-	-	-	-	-	-	-	120800	120800	120800	120800
2	ցերեկային լամպ 120սմ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	3885	3885	3885	3885
3	էլեկտրական լամպեր	4267	-	-	-	-	-	-	-	-	-	16600	16600	16600	16600
7	էլեկտրական ապահովիչ, միաֆազ 40Ա	4267	-	-	-	-	-	-	-	-	-	9270	9270	9270	9270
9	առաստաղի լուսավորման սարքեր	4267	-	-	-	-	-	-	-	-	-	6150	6150	6150	6150
11	վարդակ երկբևեռանի	4267	-	-	-	-	-	-	-	-	9500	9500	9500	9500	9500
12	էլեկտրական երկարացման լար	4267	-	-	-	-	-	-	-	-	52300	52300	52300	52300	52300
14	խրոց սովորական	4267	-	-	-	-	-	-	-	-	-	2080	2080	2080	2080
15	տվիչներ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	57225	57225	57225	57225
18	կողպեքներ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	13250	13250	13250	13250
20	կողպեքների մասեր	4267	-	-	-	-	-	-	-	-	-	17150	17150	17150	17150
28	գորգեր	4267	-	-	-	-	-	-	-	-	-	13200	13200	13200	13200
29	ախտահանիչ նյութեր	4267	-	-	-	-	-	-	-	-	-	2000	2000	2000	2000
30	օճառ, ձեռքի	4267	-	-	-	-	-	-	-	-	-	8850	8850	8850	8850

32	օճառ, տնտեսական	4267	-	-	-	-	-	-	-	-	-	2100	2100	2100	2100
33	զուգարանի խոզանակներ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	3050	3050	3050	3050
34	կահույքի փայլեցման միջոց	4267	-	-	-	-	-	-	-	-	-	6525	6525	6525	6525
38	ավելներ, խոզանակներ, և այլ կենցաղային մաքրող պարագաներ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	13950	13950	13950	13950
39	ավելներ, խոզանակներ, և այլ կենցաղային մաքրող պարագաներ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	11750	11750	11750	11750
40	հատակի լվացման լաթ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	2575	2575	2575	2575
41	հատակի լվացման լաթ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	1925	1925	1925	1925
42	հատակի լվացման լաթ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	14000	14000	14000	14000
43	ապակի մաքրման լաթ	4267	-	-	-	-	-	-	-	-	-	7000	7000	7000	7000
ԸՆԴԱՄԵՆԸ			-	-		-	-	-	-	-	**61800**	**395135**	**395135**	**395135**	**395135**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ՝900013010013 ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

Ա.Շահնազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ
Հասցե ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/6
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930053040790100
ՀՎՀՀ 00886056

Ա.Հանեշյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
<<18>> <<08>> 2016թ. կնքված
N ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ-15/11-16-05-83-16 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<<18>> <<08>> 2016թ. կնքված
N ՀՀ ԷՆ-ՇՀԱՊՁԲ-15/11-16-05 -83-16 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն